

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2017թ. թիվ _____/Ա/

**ՇԻՐԱԿ ՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

<<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Մինչև 2018 թվականի ամառային զորակոչը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից
տալ տարկետում՝

Շիրակ Մայիսի Հարությունյանին՝ (ծնվ. 11.01.1998թ., ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք.
Եղեգնաձոր, Անդրանիկի 19, բն.28) սովորում է ՀՀ Վայոց Ձորի մարզի <<Եղեգնաձորի
ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի 12-րդ դասարանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

Շիրակ Մայիսի Հարությունյանը սովորում է ՀՀ Վայոց Ձորի մարզի «Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-րդ դասարանում: 2017թ. հունվարի 11-ին լրացել է նրա 19 տարին: 2006 -2008թթ. ընտանիքով մեկնել են Ռուսաստանի Դաշնություն և առաջին դասարան Շիրակ Հարությունյանը գնացել է 8 տարեկանում: Հայաստան վերադառնալով ուսումը շարունակել է Եղեգնաձորի թիվ 3 միջնակարգ դպրոցում /այժմ Եղեգնաձորի ավագ դպրոց/: Ուսումնառությունը ավարտելու է 2018թ. հունիսին:

Ելնելով վերոշարադրյալից՝ նպատակահարմար եմ գտնում Շիրակ Մայիսի Հարությունյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև 2018 թվականի ամառային զորակոչը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը
1	<p>ՀՀ պաշտպանության նախարարություն 03.07.2017թ N ՊԼ/510-946</p>	<p><<Շիրակ Մայիսի Հարությունյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p>	<p>առարկություն չունեն</p>
2.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն 13.07.2017թ. N 01/14/12159-17</p>	<p><<Շիրակ Մայիսի Հարությունյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p>	<p>նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը</p>
3.	<p>ՀՀ նախագահի աշխատակազմ 03.08.2017թ. Ղ1940</p>	<p><<Շիրակ Մայիսի Հարությունյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p>	<p>դիտողություն չունեն</p>